

ԳԻՐԱԽՈՍՈՒՄԻՆ, ԱՂՏԵՆԱԳԻՏՈՒՄԻՆ

«ԵՍ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՄ, ՆԱՎԵՐԺԻ ՈՐԴԻ»

Նովի. Շիրազն այն բացառիկ անհատականություններից էր, որ դեռ իր կենդանության ժամանակ արժանացավ պաշտամունքի հասնող համաժողովրդական սիրո և անպարագիծ փառքի: Բայց նրա իրական մեծությունը ոչ բոլորն էին գիտակցում: «Սարի վրա գտնվող հովիվը չի պարկերացնում նրա իրական բարձրությունը: Նա պետք է ցած իջնի ու հեռուններից նայի սարին», - իմաստախոսում էր Նովի. Շիրազը: Նայ գրականության մեջ նրա վիթխարի ներկայության ժողովրդական փայլը նախնառաջ պայմանավորված էր նրա բանաստեղծական մտքի խոյանքի և մարդկային նկարագրի փիեզերական շաղախով ու այդ շաղախի անըմբռնելի առեղծվածով. նրան ինչքան մոտենում ես, ինքն այնքան հեռանում է, ինչքան հեռանում ես, ինքն այնքան մոտենում է: Նրա մարդկային խառնվածքի, ոչերկրային վարքի և լեզվանի տողի փիեզերական առասպելաբանության կախարդանքն է, որ մեզ այսօր էլ հրաշքի ու իրականության սահմանին է պահում: Տեղին է մեջբերել բանաստեղծ Գ. Էմինի անկեղծ խոսքը. Շիրազի թաղման օրը, տեսնելով բանաստեղծի նկարմամբ համաժողովրդական աննախադեպ սերը, ասում է. «Նովիանուս Շիրազն իր ողջության ժամանակ մեզ միշտ իր սրվերում թողեց, իսկ իր այս թաղումով էլ հեղմանալ սպանեց բոլորիս...»:

Նովի. Շիրազ երևույթի մասին շատ է գրվել. նրա մարդկային նկարագիրն ու տողի բանվածքը վերձանող արժեքավոր աշխարհություններ, գրականագիտական մեծարժեք ուսումնասիրություններ, նրա բանաստեղծական վաստակն արժեւորող ծանրակշիռ հոդվածներ, քննադատական էություններ, զանազան հուշապատմություններ... Վառ անհատականությունների հետ շփվելն ինքնին գայթակղիչ լինելուց բացի, խորքում նաեւ մի տեսակ տոնական փայլ ունի. այդ փայլի հայելում սովորական մահկանացուն ինքն իրեն չափակշռված և ավելի ամբողջական է տեսնում: Այս առումով պարսկական չէ, որ Նովի. Շիրազ մարդուն թեկուզև հպանցիկ ճանաչողները նրա խառնվածքի խորաններից հիշողության ջերմացնող ցուլեր էին պեղում, իրենց տեղավորում էին այդ ցուլերի մեջ՝ նրա վեհ նկարագրի հետ գոնե մանրիկ աղերսով հաղորդակցվելու և իրենց չկայացած ես-ի ինքնասիրությունը չափի բերելու համար: Եւ ինքնին բնական է ու հասկանալի, որ նրա մասին գրել են, գրում են ու պիտի գրեն, որովհետև նրա մասին վերջնական ու ամփոփ խոսք ասելու հավակնություն հագիլ թե որևէ մեկն ունենա:

Եւ ահա մեր սեղանին է գրականագիր, շիրագագիր (առաջինը կարեւորում, բայց երկրորդը հարկապես ենք շեշտում) Սամվել Մուրադյանի վաղուց սպասված «Նով-հաննես Շիրագ» գրքի առաջին մասը¹: Ասում ենք՝ վաղուց սպասված, որովհետեւ գոնե գրականագիրական շրջանակներում բոլորին էր հայտնի, որ Նովի. Շիրագի մասին գրելու իրավունք-վկայականը գրականագիրը հենց Նովի. Շիրագից էր ստացել: Սա, իհարկե, չի նշանակում, թե Շիրագի մասին խոսք ասելու իրավունքը Ս. Մուրադյանի մենաշնորհն է:

Երիցս արդարացի է Ս. Մուրադյանը, երբ գրում է. «Նա իր ստեղծած մնայուն արժեքներով հենց այսօրվա բանաստեղծն է եւ հայության Կիրակոս անցյալը, Կրակոս անցյալներով ու մաքառումներով բնորոշվող ներկայի մեծ երգիչը եւ լոճաշար գալիքի գերագնիվ պարզամտությունը»: Այդ «գալիքի գերագնիվ պարզամտություն էր», որ երեկվա արգելապարնէշ ժամանակների կոճաշիւրը փրթելով նաեւ գալիք սերունդների համար հիշեցումով բանաձևեց.

Թուրքն հայի արնից ձեռքերը հանում,
Ասքծո արցունքի մեջ է լվանում,
Սրբում սրբիչով ազգերի Կոված,
Յնցում լուծյամբ նրանց անասրված...

Բայց մինչ այդ եղել էր սկիզբ, Նովի. Շիրագի գրական մուրքը, երբ սերնդափոխությունը կարծես արյունով պարտադրված իրողություն էր. Չարենցի եւ Բակունցի պես բանբարները ձիու վրա ու հենց սլացքի մեջ զարկվեցին, եւ նրանց կառավար թափը Կրակոսներում մարեց: Այն մտայն Կրակոսներն էին, երբ պերական ու կուսակցական մեքենան հանճարն ու բանջարը մեկտեղած աղում ու արյունոտ ժամանակների մարդակուլ որկրամոլներին դարձյալ դեպի քարանձավների խավարն էր մղում: Թվում էր, թե այս պայմաններում զգայուն մարդը կամ ինքնասպան պիտի լիներ, կամ պիտի ինկադարվեր, բայց հանճարները հենց նրա համար են հանճար, որ լույսն ու խավարը ճիշտ ժամանակին իրարից գալեն. ժամանակի Կրակ ու պաղ քամիների ուղղություններն իր մեջ ճշգրտած Շիրագը ձգեց իր բանաստեղծական գոպին ու գնաց բախարին ընդառաջ: Դա լոկ հեռավար խիզախություն չէր, իրավիճակի սրված ըմբռնում ու ծանր առաքելություն էր՝ Չարենց հանճարից հետո դառնալ բանաստեղծական նոր խոսքի մոնետրիկ: Ս. Մուրադյանը ճիշտ է նկատել. «Որպես ճշմարիտ ժողովրդական բանաստեղծ եւ իր մեծ ու լուսավոր նախորդների արժանավոր հոգեժառանգ ու ազնիվ շարունակություն՝ իր հզոր քնարերգությամբ նա ժողովրդի մեջ արդարացիորեն նվաճեց բարձրագույն հեղինակություն՝ կանգնեց այդ մեծերի կողքին եւ դարձավ հուսալի կամուրջ նախորդների եւ հաջորդների միջեւ:

Եւ սա ամենեւին չափազանցություն չէ: Մեր գրական միտքը, մանավանդ խորհրդային Կրակոսներին, Նովի. Շիրագ երեսույթի գնահատականներում, մեղմ ասած, եղել է գուսպ ու չափավոր, ավելի հաճախ դրսևորել է անհարկի ժապուղություն, իսկ քննադատը-

¹ Ս. Մուրադյան, Նովհաննես Շիրագ. Բանաստեղծը, մարդը, Գիրք Ա., Երևան, 2012. հովանաորներ՝ Տեր եւ Տիկին Յովսէփ եւ Գարոլին Նապաստեան (Լուս Անճելոս, ԱՄՆ):

լիս էլ ցուցաբերել է անսովոր շոքայություն...»: Այդ խառնակ ժամանակներում, երբ անգ-գույշ ասված մեկ խոսքն անգամ կարող էր դառնալ մի ողջ կենսագրություն հիմնահա-
պակ ջնջելու առիթ, դժվար էր և՛ մարդ մնալ, և՛ ճշմարիտ խոսք ասել: Նենց ժամանակի
այդ զարկերակի վրա մարդը դնելով՝ Ս. Մուրադյանը մի փոքր ցնծուն երախտագի-
տությամբ է անդրադառնում այն համարձակներին և ողջամիտներին, ովքեր ընմոնել ու
արժևոժել են Նովի. Շիրազի ազգանվեր գործունեությունն ու ծառայությունը. նրա մարքի
թոփքին պարշաճող խոսք են ասել, արժանապատվոք են կանգնել կողքին ու քաջալերել
են: -Քիչ չէին նրանք ևս այն էլ ինչպիսի պայծառ անհատականություններ էին՝ Ալ. Շիր-
վանզադե, Ավ. Իսահակյան, Վ. Ալազան, Գ. Մահարի, Ն. Սահյան, Պ. Սեւակ, Ս. Խան-
զադյան, Ն. Օշական, Ա. Ծառուկյան, Վ. Սարգսյան, Ս. Աղաբաբյան, Նր. Թամրազյան...
Եւ կարծես նրանց հավաքական գնահատականի հավաստամբ լինի Նր. Թամրազյանի
այն պնդումը, թե՛ «Անողորմ, բայց խմաստուն ժամանակը խոսում է Նովի հանդեպ Շիրազի
օգրին»: Իհարկե կային նաև այնպիսիները (օրինակ՝ «աստղերից իջած մի կին»), ով-
քեր իրենց մեջ կուտակված չարության մաղձից խելագարված, գոռում էին. «Այս Շիրազ
կոչված խուլիգանին պետք է մարմնապես, ֆիզիկապես ոչնչացնել...»: Բայց թե այդ ո՞ր
մի հանճարի ճանապարհն է եղել հարթ, այնպես որ՝ շները հաջել են քարավանը գնացել
է: Ու մեծը մնացել է մեծ, ինչպես Ջիվանին կասեր.

Արևը առանց վախենալու ցայտում է լույսը,

Ամպերը դեպի աղոթարան կուգան ու կերթան:

Եւ մնայունի ու անցողիկի այս չափազանց խորությունում փարբեր դերակատա-
րություններ ունեցողների հենց այս դրսևույթն աչքի առաջ ունենալով, Ս. Մուրադյանը
նկատում է. «Անողորմ և խմաստուն, ժամանակի հարահոսը բոլորին է սրբագրում պա-
րահական ու երկրորդական գծերից, փանում է անցողիկը, թողնում մնայունը, ոմանց
էլ ամբողջությամբ է փանում... Իսկ ժամանակի պարվերն անվերապ կատարող ակամա
վարերն ու կամա չարամիտները ակնհայտնի էին իրենց բամբասանքներով, անձնական
նախանձի մաղձ ու թույնով: Սրանց սպոր արարքներից, խարդավանքներից ու դավերից
դժգոհ բանաստեղծն իր հոգեվիճակը պարկերավոր այսպես է ներկայացրել՝

Ծիածանը փրկու լինե՛ր՝ կսեռանար ցավից...»:

Այսպիսի թանձրահենց միջավայրում սրելոճագործելու համար հանճար լինելը քիչ
էր, կամք ու կորովի անսասանություն էր պետք, կամք ու կորովի անսասանությունը քիչ
էր, պնդելու չարին դիմակայելու խիզախություն էր պետք, խիզախություն ունենալը քիչ
էր, ոգու հրեղեն սլացք էր պետք, ոգու հրեղեն սլացքը քիչ էր... Նովի. Շիրազն ուներ այդ
ամենը, բայց նա մարդ էր, միստարայուն էր, հոգու ու ոգու շաղախ, որի հոգին երբեմն բա-
րակում ու կարծես կախվում էր օդում, և «ինքնասպանության մարքի ագռավները գլխում»՝
բանաստեղծը մարդահալած բորենիներից փախչում ու ինքն իր մեջ էր ապաստանում:
Ու մի բան էր խնդրում Ասածուց՝ երեխաներին առողջություն, բանաստեղծություններին
ու պոեմներին՝ անվանդակ երթ: Իսկ կենցաղում... ինչպես Ջիվանին կասեր.

Բմ խղճուկ փռակս ինձ քավական է,

-Քեզ լինի, բարեկամ, պալապող պետք չէ:

Այս ամենն ի նկարի ունենալով՝ գրականագետը գրում է. «Տասնամյակներ շարունակ դերվիշի կյանքով ապրած, երբեք շքեղության ու վայելքի չճգաող, ամեն ինչ անմնացորդ իր ժողովրդին փոխադրելու և փոխարենը ոչինչ չպահանջող այդ նվիրյալ բանաստեղծը Եդեմն արևած ու պարսկական հայրենիք կորցրած մեր ժողովրդի մշտաբերուն խիղճն էր ու ոգին»:

«Բանաստեղծի ծնունդը» մասում, գրականագետը մանրամասն անդրադառնում է Շիրազի խաթարված, «կուր գնացած» մանկությանը, որը «մեկից մի հաց գողանալով» և որբանոցների փխրադուր անհուսության մեջ է անցել: «Սովը ուրուրի պես պարվում էր մեր խրճիթի գլխին, - հեղափայտում գրել է բանաստեղծը, - մեկ ուգում էր իջնել, իսկ մեկն ու մեկիս, բայց ինչ-որ մի անհայտ բախտ գութի էր գալիս և հայրնվում մի վայրկյան դողացող ձեռքում մի կտոր հացի փշրանք... Եւ մեր օրերը արքասվելով անցնում էին: Եւ մի օր մայրս մեզ փարավ որբանոց»:

Գրականագետը մարդու ծնունդը և բանաստեղծի ծնունդը հասկանալի պրամաբանությամբ փարանջարելով, Շիրազ երևույթին դեռ իր երման կեպում անդրադառնալիս փիլիսոփայական մոտեցմամբ մի պահ խռի է քրվում. ո՞վ է բանաստեղծը, ինչպե՞ս է ընկալվում ու սահմանվում, բանաստեղծ ծնվո՞ւմ են, թե՞ դառնում... Եւ դա շար բնական է, որովհետև բազմաթիվ են փաստերը, երբ մեկն ընդամենը մեկ բանաստեղծությամբ պարմության մեջ է մտնում, իսկ մեկ ուրիշի փասնյակ գրքերը մոռացության քամիներն են փանում: Ինչպե՞ս, ի՞նչ մոտեցումով սահմանես, երբ անգամ Բայրոնի նման հսկան էր կասկածում՝ ինքը բանաստեղծ է, թե՞ ոչ, երբ հանճարեղ Չարենցը օրվա առաջին կեսին մերժում էր հանճարեղ Տերյանին, օրվա երկրորդ կեսին՝ Աստվածացուն: Շիրազի պարագային գրականագետը հստակ պարասխան ունի՝ Ղովհ. Շիրազը բանաստեղծ էր ծնվել: Եւ դա ամբողջ հայ ազգի համոզմունքն է: Գրականագետի հեղ խորհենք նաև ինքներս. այն կենսապայմանները, որոնցում աշխարհ եկավ Օհիկ Կարապետյանը, մեղմ ասած, այնքան էլ «բանաստեղծական» չէին: Եդեմնի ահավոր փարիներ, արեմտաբանայ սովահար գաղթականներով ու որբերով լեցուն խղճով Արեւելյան Նայաստան՝ պարերազմական վիճակում, վեց փարեկանում՝ հոր կորուստ, դժվարագույն մանկություն, որբանոց, գոյարեւման մաքառում՝ այդ հասկացության ամենարեղբրկուն իմաստով... Ուրեմն որբա՞ն գորեղ էր ներքին մղումը, որբա՞ն գորեղ էր հոգու խորքում անթելված աստվածային կայծը, որ Շիրազ բանաստեղծը դժխքի արգանդում դրախտի սաղմ որոնեց...

Պիպի նշել, որ գրականագետը մի առանձնահատուկ սեւեռումով ու բժախնդիր մանրամասնությամբ է անդրադառնում բանաստեղծի ծննդյան փարեթվի ճշգրտմանը՝ 1914, թն 1915թ., և դա բնական է, որովհետև ի սկզբանե ինչ-որ մի բան այն չի եղել: Բայնն այն է, որ փարբեր աղբյուրներում նշված և փարբեր վկայություններով կարծես թե հիմնավորված էր, որ բանաստեղծը ծնվել է 1914 թ. ապրիլի 26-ին: Ծննդյան այս փարեթվի ստույգ լինելը բանաստեղծը ոչ միայն չէր առարկում, այլև փարբեր առիթով ինքն էր հաստատում.

Վեց փարեկան մանուկ էի,
Երբ կորցրի աղքատ հորս, -

պարզ թվաբանությունը հաստատում է, որ նա ծնվել է 1914-ին: Բայց ահա 1965 թ.՝ Նայոց մեծ եղեռնի 50-ամյակի դեպքերից հետո, Նովի. Շիրազը հասնում շեշտադրումով հայտարարում է, որ ինքը ծնվել է հենց 1915 թ. ապրիլի 27-ին՝ Մեծ եղեռնի դժոխակ օրերին Կարսից Գյումրի գաղթի ճանապարհին: Այս փաստը նա հաստատել է և վավերացրել է նաև բանաստեղծությամբ.

Ես ծնվել եմ ձորերում,

Եղեռնի սև օրերում:

Իսկ եթե այդպես է, ուրեմն մենք գործ ունենք մաքուր ֆանտաստիկայի հետ. Եղեռնի մոճավանջը բանաստեղծը դեռ չծնված, դեռ մոր արգանդում է պետել ու զգացել... Ահա և Շիրազ մարդու և Շիրազ բանաստեղծի անսպառազիծ ողբերգությունը՝ դեռ արևալույս չսրած, քրեախառնակների միգամած փառաբանությունում արյան հեղեղ պետավ, հայի արյան, ծեր ու մանուկ մարտիկ գառան պես մորթեցին, մեկ փառքերությամբ, որ մարադը Աստծուն չէին խոստացել, սարանային էին խոստացել... Սա ճակատագիր է, արյունոտ ճակատագիր, որ բանաստեղծի ձեռքից բռնած փանելու էր փառապանքի արահեպներով...

Ով հայոց վշտով ինձ պես է փարվում՝

Իմաստըսանում է կամ խելագարվում:

Անհեթեթ ու անըմբռնելի ժամանակներում, երբ առողջ մարքի ամեն մի ցուլ ու նշույլ անմիջապես պարանքվում էր սևամեղձ բնագոյների երմախորշերում բաղաբակախություն հունցող խավարասեր ու բիրտ պաշտոնյաների թանձրամիտ ուղեղներում, երբ աչքի մեջ մագ ու փողի ծիածանաթել էյուսվածքում անգամ թշնամու շունչ էին որոնում, դժվար էր բանաստեղծ լինելը: Նւարովի, ծանրագույն մեղադրանքներով անխնա ոչնչացվում էր հայոց մարքի քանքարը, ու «ասպարեզը համբակներուն էր մնում»: Ժամանակի այդ դառնաշունչ մթնոլորտի մասին Ս. Մուրադյանը գրում է. «Գարնանամուտ» գրքով և նույն 1935-ին լույս տեսած «Միամանր և Խջեզարե» պոեմով Ն. Շիրազը հայտնվեց մի մթնոլորտում, ուր պերականորեն ամեն ինչ գործադրվում էր ազգային մրաժողություն, ոսկոր ու ողնաշար ունեցող բոլոր ճշմարիտ արվեստագետներին լեցնելու և ասպարեզից հեռացնելու համար: «Յարերի գահին բազմած» և «աշխարհը ֆայթոն շինած» թիֆլիսցի «նեղճակալ կինություն» հրամանով բոլոր ազնիվ մրավորականները ենթարկվում էին դաժանագույն բռնության ու հալածանքների, երկիրը բռնել էր «ծովածավալ արյան ցուլը շոյալածին», «միջնադարյան արեգնացյալ կացինը» կտրում էր հայոց անփառի ծառերը, կտրում ու «լափում էր որձակը մարքի»: Մրալիկյան դաժան հողմը գորշ ու դեղին փերեկների պես Նայասարանից ցրում-հեռացնում էր հայրենի հունդերը, որ գնան և «թշնամի դաշերում մեռնեն» (սա այդ ժամանակներին րված չարենցյան հանճարեղ բնորոշումն է):

Չարենցի ֆիզիկական ոչնչացումից հետո փաստորեն «Նովի. Շիրազին էր վիճակված պարմական մի ծանր ու վսեմ առաքելություն՝ անկարելի պայմաններում անմար պահել հայ քնարերգության ջահը»: Եւ Նովի. Շիրազը պարսիքի փակ չմնաց ու ազդարարեց «մեր երգերի լուսաբացը».

Մանուշակներ ձեռքերիս ու շուշաներ ուրբերիս,
 Ու վարդերը այսերիս ու գարունը կրծքիս փակ,
 Ու երկինքը՝ հոգուս մեջ, ու արևը այսերիս
 Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք...

Եւ աստիճանաբար, ինքն իր խռիւրի մեջ իմաստնաւորով, անցյալն ու ներկան համադրելով, մեծերի հետ ասել-խոսելով, Նովի. Շիրազը պարագծված նրբանկարությամբ հյուսում է մայրական սիրո առասպելական մաքրությունը, նրա Աստվածային վեհությունը: Եւ «եթե մայրերգության ասպարեզում հայ գրականության մեջ Նովի. Շիրազն ուներ իր նախորդները, հանձինս՝ Ս. Շահագիզի, Զիվանու, Նովի. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի ու Ե. Չարենցի, ապա հայրերգության բնագավառում նա մնում է որպէս եզակի եւ անկրկնելի: Նրա մեծ նախորդներից ոչ մէկը, սակայն, մոր ու մանավանդ հոր կերպարներն այնքան համակողմանի ու բազմերանգ չի ներկայացրել, որքան Նովի. Շիրազը»:

Այս մորթին որպէս լրացում, հուշի մի թանկ մասունք է մեզ ներկայացնում Ս. Մուրադյանը. «-Գիւրե՛ս, ասաց մի անգամ, «Ձախորդ օրերից» պակաս հանճարեղ չէ Զիվանու «Մայրիկ» երգը: Մորթյալ որդին նեղացել է իրեն լքած մորից եւ ինքն էլ նեղացրել է նրան, բայց մոր մահից հետո ծանր զոջումով էլի նրան է դիմում.

Զիվանին եմ, սխալմունքս զգում եմ,
 Ես քո հոգու համար միշտ աղոթում եմ,
 Ների՛ր քո մորթյալ որդուն, խնդրում եմ,
 Եղի՛ր երկնքումը ինձ սաքար մայրիկ:

Անրեղի չէ ժողովուրդը պաշտում Զիվանուն, ուրախության թե փխրության պահերին սփռվում նրա երգերով: Կոստն, որ կամաց-կամաց իմ երգերն էլ կերգէ: Գրեթե ամեն րոտ երգում են Սիամանոյի երգը՝ «Նիմա ո՛վ է ձեզ համբուրում»: Լավ նշան է, բայց Զիվանին կորցրած Վանա ծովի կորուստ ու կարուր չունեի ինձի պես... Մոր կորուստ ունեւ, ավերակ Անիի համար ողբում էր, բայց հայրենիքի կորստյան կսկիծ չունեի մեզ պես»:

Գրքի՝ «Դեպի մեծ աշխարհ» մասում, Ս. Մուրադյանը խռիւրական-վերածական քննարկման նյութ է դարձնում կարեւոր մի հարց՝ Նովի. Շիրազ բանաստեղծի գեղարվեստական մրաժողության համակարգը գրական ո՞ր ուղղությանն է բնորոշ՝ ժամանակագրի, թե՞ ռեալիզմի: Գրականագետը նշում է, որ Դանիել Վարուժանի նման՝ Նովի. Շիրազն էլ իր առջեւ չի դրել այնպիսի խնդիր, որ ինքը անպայման լինի ռեալիստ կամ ժամանակի, նա նույնպէս համադրական մրաժողության կամ «սինկրետիկ արվեստի» կողմնակից է, եւ նրա սրբազանության մեջ էլ, ինչպէս Արսեն Տերտերյանն է նկատել Մուրացանի առիթով, ռեալիզմն ու ժամանակագրը «միախառնված են՝ վերջինիս փրկապետական շեշտումով»: Ռոմանտիզմ, թե՞ ռեալիզմ՝ ամեն դեպքում երկուսն էլ ձգարում են կենսական ճշմարտության բացահայտման: Որովհետեւ... դե եկ ու հետեւյալ բանաստեղծական հայրնության մեջ ժամանակագր կամ ռեալիզմ որոնիր.

Իմ սուրբ հայրենիք, դու սրբիս մեջ ես,
 Դու սրբիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,

Իմ սրբի միջից՝ թե սիրտս ճեղքես՝

Դրոշիդ բոցը պիտի հուրհրա:

Նովի. Շիրազ բանաստեղծի մասին ընդհանրապես, իսկ այս բանաստեղծության մասին մասնավորապես Սերո Խանգադյանը իր հիացմունքն է արտահայտում երբեմնի զինվորի ու արձակագրի միաձույլ հրճվանքով. «Շիրազը Մեծ հայրենականի տարիներին հզոր ուժ էր զինվորներին համար: Նազիվ թե համաշխարհային ժամանակակից պոեզիայում այսպիսի նվիրվածություն գտնվի»:

Բանաստեղծական մտքի խորության, պարկերի ու ասելիքի թափանցիկության, ազգային ոգու, հայ մարդու դիմագծի ու նկարագրի բովանդակային խորացման և այն համամարդկային դարձնելու, համամարդկային արժեքների հոլովությունում բացառաբեկ իմաստասիրության մեջ ևս միշտ մի ընդհանրական գիծ եմ տեսել Ջիվանի, Թումանյան, Իսահակյան, Շիրազ մարգարաշարում: Իր նախորդների նման Շիրազ բանաստեղծի միտքն էլ հասավ իր ազգի լինելության ակունքները, տեսավ անտեսանելին, ըմբռնեց անըմբռնելին, ցավն ու տառապանքն զգաց և նրա հոգում բնավորված լայնախոհ փիլիսոփայական ընդգրկուն ու ամբողջական պարագծեց հայի հավիտենական մորմոքի դիմագիծն ու երազանքի փխրուն վեհությունը: Ահա մի փայտյուն վկայություն-խոհ.

Լռվ մի բանի համար կուգեմ անմահություն ունենալ,

Այս աշխարհում դարը մի օր կենդանություն ունենալ,

Որ քեզ նորից գամ օգնության, ազգ իմ, երբ որ նեղն ընկնես,

Ահա ինչու չէի ուզի հավիտյան քուն ունենալ:

Նովի. Շիրազ բանաստեղծի մտքի ու հույզի խորացումն իր շիկացման կիզակետին է հասնում հարկապես Եղեռնի թեմաներով գրված բանաստեղծություններում: Մ. Մուրադյանն իրավամբ նշում է, որ խորհրդային ժամանակների առաջին բանաստեղծը, որ Չարենցից հետո նպարակասլացորեն արժարժել է Նայոց մեծ եղեռնի ու սփյուռքահայության թեման և գեղարվեստական հզոր պարկերներով կարողացել է հասկանալի դարձնել հայ մարդու հոգուն ու մտքին, անկասկած Նովի. Շիրազն է:

Ահա Եղեռնի թեմայով գրված և ժամանակների ստարանայական աչքից հնարավորին չափ այլաբանորեն շարժված մի բանաստեղծություն, որ դարձել է Եղեռնից փրկված հայության՝ միլիոնավոր զոհերի և կորուսյալ հայրենիքի ողբերգական հիշողության պարկերավոր արտահայտություն.

Կանգնած քրքրմում է կանաչ եղևնին,

Այնինչ՝ լույսերը ցնծում են վրան,

Անտառն է հիշում փխրած եղևնին,

Ոսկե լույսերը չեն հուզում նրան:

Շուրջը թողում է ուրախ Նոր տարին,

Մարդիկ ցնծում են և անհոգ պարում,

Այնինչ ողբում է իմ մայր եղևնին,

Մորթված անտառն է նա մարբերում:

Նովի. Շիրազի այս կարգի բանաստեղծությունների մասին իր ասելիքն ամբողջացնելով՝ Ս. Մուրադյանը նկատում է. «Եղեմնի թեման Նովի. Շիրազի համար պարսկական հեղափոխություն չէր, այլ մեծ կենսական փոփոխություն պահանջող ու ողջ էությունը կլանող մի անհերքելի դաժան իրողություն, որի գեղարվեստական մարմնավորումը նա Սիամանոյի նման համարում էր իր՝ հայ բանաստեղծի և քաղաքացու անմարելի պարտքը»:

Գրքի չորրորդ՝ «Պոեմների աշխարհը» մասում գրականագետը նախ անդրադառնում է հայ գրականության մեջ պոեմի ժանրի արմատավորման նախապայմանները՝ նշելով Դավթակ Զեքթողի «Ողբ ի մահ Մեծի Ջևանշիրին» և Գրիգոր Նարեկացու «Մարտան ողբերգության» երկերը, որոնք արդեն իսկ ունեին պոեմի հարկանիշներ: Այնուհետև անդրադառնում է այն հեղինակներին, ովքեր հայ գրականության մեջ որոշակի ներդրում ունեն պոեմի զարգացման բնագավառում: ԺԹ. դ. վերջին և Ի. դ. առաջին պատմականներում իրենց հզոր պոեմներն էին գրել Նովի. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Վարուժանն ու Ե. Չարենցը:

Խոսելով Նովի. Շիրազի պոեմների մասին՝ գրականագետը նախ անդրադառնում է նրա վաղ շրջանի գործերին, և առաջինը նշում է «Մոկաց Միրզան» քնարաէպիկական պոեմը, որից ընդամենը 14 տողից բաղկացած մի պարաֆրազ է պահպանվել և մեկ գրեթե ամբողջական գրուի: Վերնագիրն անգամ հուշում է, որ «Մոկաց Միրզան» պոեմում, որի տպագրված հարվածի տակ նշված են 1934-35 տարեթվերը, հեղինակը պիտի որ կերպավորած լիներ միջնադարյան վեպերի հանրահայտ հերոսին: Բայց 1936 թ. Ա. Խանջյանի ողբերգական սպանությունից հետո Նովի. Շիրազը ակնհայտ նմանություն ցուցաբերում է միջնադարյան վեպերի հերոսի և Աղասի Խանջյանի՝ դավադրաբար սպանվելու իրողության միջև: Նավասարթը հենց այդ օրերին բանաստեղծը անմիջական տպավորությամբ ամբողջացրել է իր «Մոկաց Միրզան» պոեմը և հասկանալի պարզաբանությամբ հրապարակման ներկայացրել ուրիշ տարեթվով՝ 1934-35: Այդ պոեմից մնացած պարաֆրազների առիթով ինքը՝ Նովի. Շիրազը, պարզաբանում է. «Սա այն պոեմի փշրանքներից է, որ դրկել էի «Գրական սերունդ» ամսագրին, բայց տակն առնելու փոխարեն, որ դավադրություն էր, մազից եմ պրծել. փրկել է միայն պարսկական հասակը: Կտրելի, քանի որ պոեմի տեսանկյունից թողի հետևում երևում էր սպանված Աղասու լացակոմած աչքերի անհույս հայացքը, - Մոկաց Միրզան ինքն Աղասին էր, որին կանչում են այլազգի փրկակալները և... սպանում, վասնզի ազգապաշտ էր... ուզում էր ծաղկեցնել մի բուռ հողն այս... մինչև հասնեինք այն ծովածիր Նայասարանին, և ահա հույսն սպանվեց, խղձն անգամ...»:

Նաջոթը «Մասունցի Դավիթ» կամ «Ծովինար» պոեմն է, որից, ցավոք, դարձյալ հարվածներ են պահպանվել միայն: Գրականագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ Նովի. Շիրազը գրել է ամբողջական պոեմ: Շիրազն իր մտքերի ընկերացը՝ Վարդան Շահխաթունուն գրել է. «Իմ մեջ ոլորվում է «Մասունցի Դավիթ» ուրվականը: Իմ գրական մեծ գործը դա է լինելու: Ապրում եմ դրանով ու շնչում Դավթի հետ»:

Լուրջ հիմքեր կան պնդելու, թե Նովի. Շիրազն իրոք գրած է եղել ամբողջական պոեմ:

«Սիամանթոն և Խջեզարե» պոեմը թեպետ գրվել է պարսկական տարիներին, բայց հեղափոխություններից է մեկ պատմական պատկերացումների: Այդ լրամշակումները, սակայն, ինքնանպատակ չէին. սկզբից երեք բանաստեղծական նյութի հանդեպ ահեղի սեռերում է եղել, և պոեմի մշակումները գերազանցապես ընթացել են գեղագիտականի ու գաղափարականի՝ այս դեպքում ազգային-հայրենասիրական, առավել խորացման սկզբունքով:

Պոեմի պարզ ու միամիտ ընթերցումը կարծես թե մեզ հուշում է, որ դա հեքիաթի պես հյուսվող մաքուր սիրտ չքնաղ մի պատում է, բայց սա այն դեպքն է, երբ վարարած գերի փրկություններին նայելով պեսնում ես նաև անպեսանելի՝ փրկություններից ներքև, ջրերի խորքերում, ձկների վրառն ապրում է իր քրամաբանությամբ: Այս իմաստով ճիշդ կլինի լսել իրեն՝ Նովի. Շիրազին, որի խոսքը մի կողմից պոեմի յուրաքանչեք մեկնաբանությունն է, մյուս կողմից՝ իր ուսուցչի՝ Ավ. Իսահակյանի հայրենասիրական ու մարդկային գործունեության մի դրվագի լեզվանի բնութագրումը. «Սիամանթոն և Խջեզարե» պոեմը Արաքսի այս ափին դրված «մեծ հայելի է», որն արտացոլում է այն ափը՝ «ողջ Արևմտյան Նայասարան» իր Վանով ու Վանա ծովով, իր Սիփանով ու Աղթամարով, իր Սասունով ու Նագովածովով, իր Նեմրութով ու Գրգուռով, իր Արածանիով ու Եփրատ-Տիգրիսով, իր Սիսով ու Մասիսով: Եւ ահա խմբագիրը հանել էր գրքից պոեմը: Չէր սպորազրում, որ գիրքը պապագրվեր: Ես բողոքեցի, և դարձյալ Իսահակյանն էր, որ քաջությամբ հանձն առավ պոեմի նավը հրել դեպի կյանքի ծովը: Ես այս բանը համարում եմ մեծ բանաստեղծի հայրենասիրության գերուխոր գորգի հիմնաթելերից մեկը»:

Բոլոր մեծարժեք գործերի նման Շիրազի մյուս՝ մայր «Բիբլիականը» խոհաքնարական պոեմն էլ միանշանակ ընդունելության չարժանացավ. ժամանակի մեծերի հիացական գնահատականներին դեմառաջ եկավ 26 արամներով գինված 26 հոգիանոց ռեմակը. «Ո՛րք է քանում մեզ Շիրազը յուր բիբլիականներով. սրալինյան լուսավոր իրականությունը թողած՝ ասպղերի մեջ է կյանք որոնում»: Եւ «խոյի բերանում վագրի ժանիք» որոնողների այս նենգամիտ հարձակմանը Շիրազը շիրազավարի հակադարձել էր. «Ես եմ առաջին փիեղերագնացը, որովհետև ձեր Գագարինն իմ հետեից եկավ...»:

Բայց զագրախոսությունները ժամանակի քամին տարավ, ու մնաց մնայունը: Նշենք, որ 1942 թ. գրված ու 1944 թ. տպագրված մայր «Բիբլիականը» Նովի. Շիրազի այն գործերից է, որ գրվել է մեկ շնչով և հեղափոխում գրեթե հեղինակային փոփոխությունների չի ենթարկվել: Ս. Մուրադյանը նշում է, որ ինչպես բանաստեղծական շարքում, պարմվածաշարում կամ վիպաշարում միավորվում են ինքնությունը գեղարվեստական որոշակի ընդհանրություններով օժտված միավորներ, այդպես էլ Ն. Շիրազը նպատակահարմար է գտել իր ութ պոեմները գերտեղել մեկ շարքի մեջ («Բիբլիական», ««Բիբլիական»-ի վերջաբանը», ««Բիբլիական»-ի երկրորդ արարչականը», «Աստուծո գլուխ-գործոցը», «Ինքներգանք համամարդկային», «Զեյսի ծաղիկը», «Սիրո և իմաստության սրինգը», «Շղթայված մեղեդիներ»):

Այդ առանձին պոեմները, Շիրազի պնդմամբ, բոլորն էլ «Բիբլիականի» զարմից են:

Այս գործի դարսաձայքերում անթեղված փիլիսոփայական խարացումների վերծանման բանալին որոնենք մեր մեծ վարպետի՝ Ավ. Իսահակյանի մոտ, որ իր իմաստասիրական մտքի բարձունքից գնահատում է Նովի. Շիրազ երևույթի աստվածային ձիրքի առանձնահատկությունները. «Շիրազը հայկապ դեմք է մեր պոեզիայի Պառնասսում, հորդաբուխ ու ճշմարիտ բանաստեղծ: Նրա ամեն մի բանաստեղծությունը մի անկրկնելի գյուտ է՝ զարմանալի պարկերներով: Բնությունը նրան օժտել է փիլիսոփայական խոր ինտուիցիայով: Նամաշխարհային գրական գոհարներ եթե կազմեն, ես մեծ սիրով արեղ կտայի «Էքսպրոմպրիս», «Բիրլիականին» եւ այլ բանաստեղծությունների: «Բիրլիականը», փիլիսոփայական մեծ փառանդի գործ է:

Խորիմաստ «Բիրլիականի», ծաղկաբույր «Խջեզարեի» եւ մյուս պոեմների կախարդ հեղինակը հեղեղակալեցինք իմ ամենամեծ հայ լիրիկն է: Ն. Շիրազը հայ ժողովրդի դարավոր մատախուղում ծագած աստղն է («Երբ չծագած աստղ էիր մատախուղում երագի»): «Բիրլիական» պոեմը գրված է վայրենի փառանդով:

Եւ իրոք, ասես փիեզերքի նախաստեղծ խաղաղության մեջ գերխիտ աստղի պայթյունով բանաստեղծական արարման հրաշք է բացապարզվում, եւ Նարեկացու ջրերն ընկած ու Նարեկացու մեռնաջրով ցողված Շիրազ բանաստեղծը մտնում է Աստուծո փրկություն. միտքը դառնում է շիկացած խռի, պարկերը դառնում է թափանցիկ-լեզվանի, համեմատություններն ու հակադրություններն ասես բախվում են մոլորակների փիեզերական թափով, աշխարհաստեղծման լույսը բուրբուրում է թոնրից հանած լավաշի հանգույն, եւ արարչագործության հրաշքը պայթում է բողբոջի պես.

...Լույսի հրճվանքը փվեց երկնքին,
Կապույտ ծիծաղը ծովին ծավալեց,
Ճերմակ ժպիտը սփռեց ձյուններին,
Վեհության խիղճը լեռներին փվեց,
Դաշերին՝ կակաչ ժպիտը զարնան,
Դայլայլը փվեց հավք ու հովերին,
Նողին բերկրանքը փվեց մայրության,
Սիրո խայտանքը փվեց ամենքին
Ու բոլոր վարդերն իր ուրախության
Շաղ փվեց այսպես նորաստեղծ երկրին...

Մյուս՝ «Բիրլիականի երկրորդ արարչականը» պոեմը, որի գրության ստույգ փարեթիվը գրված չէ, ըստ էության մի յուրաքանչեք ընդվզում էր գաղափարների ու պլակատային կարգախոսների դեմ, ինչպես օրինակ՝ «Կոմունիզմի նպատակը ազգերի միաձուլումն է»: Այդ կարգախոսի «միավորյալ» բնույթի քայքայիչ հետևանքներն զգալով, դադստանցի բանաստեղծ Ռասուլ Նամգաթն ընդվզում է.

Թե պիտի մեռնի վաղը իմ լեզուն՝
Ավելի լավ է՝ ես այսօր մեռնեմ:

Որեւէ գաղափարից ածանցված մեկ այլ գաղափար միշտ էլ ունենում է բուն գաղափարի հեղեղաբերության ուժեղ կամ թույլ դրսևորումներ: Այս մտքի գեղարվեստա-

կան բաղադրիչի ուղղվածությանն անդրադառնալիս Ս. Մուրադյանը նկատում է, որ ուժեղ կապի դրսևորման բնորոշ օրինակը, թերևս, Նովի. Շիրազի «Աստծո գլուխգործոցը» պետք է, որը արարչագործության գեղարվեստական մարմնավորման խմաստով անմիջականորեն առնչվում է մայր «Բիրլիականին», իսկ նրա «Վերջին գլխի» երկրորդ հատվածը նախորդ՝ «Բիրլիականի երկրորդ արարչագործականը» պետք է թվացյալ կրկնությունն է, որտեղ վերստին հանդիպում ենք ծաղիկների բազմերանգության և նրանց լեզուներով մարդկային ցեղերի հարաբերման արդեն հայրնի պարկերին: «Այս դեպքում բնական հարց է ծագում. մայր «Բիրլիականից» հետո ինչո՞ւ գրվեցին մյուս «Բիրլիականներն» ու «Աստծո գլուխգործոցը», և ի՞նչ են դրանք հավելում նախորդին, - հարցնում է Ս. Մուրադյանն ու պատասխանում է. «Առաջինը պարկերում է «դարեր ու դարեր» Աստված կոչված անհայտ ոգու արարչագործության արդյունքները՝ առանցքում ունենալով վշրի թելադրանքով ցավի դեմ մաքառող և աստիճանաբար խմաստնացող մարդու կարարյալ հաղթանակը բնության փրկերային ուժերի նկատմամբ: Բանական մարդու ամենագոր ուժի փառաբանումը մայր «Բիրլիականում» իրոք որ գեղարվեստորեն կարարյալ է, սակայն բանաստեղծին չի բավարարել մարդու էության՝ ինչո՞ւ, ինչպե՞ս հարցադրումների գեղարվեստական մեկնությունը, որը թեև փիլիսոփայության պարմության գիտական հիմնախնդիրն է, սակայն միևնույն ժամանակ գեղարվեստական գրականության հավիտենական, մշտապես արձանվող ու անսպառ թեմաներից է՝ պարկերավոր մարմնավորման հին ու նոր դրսևորումներով»:

Նովի. Շիրազի՝ պարմողական փարերից գրեթե զուրկ «Ինքներգանք՝ համամարդկային» քնարախոհական պոեմը նորագույն ժամանակների մարդու էության գեղարվեստական բացահայտման փայլուն մի փորձ է, որի համար բնաբան է ընտրված անմահ Սայաթ-Նովայի բողոք՝ «Ամեն մարդ չի կանա կարդա. իմ գիրքն ուրիշ գրեն է...»: Մարդու բանականությունն ու հզորությունը փառաբանող այս պոեմը մարդերի ու զգացմունքների նարեկացիական շնչով կանոնակարգված մի երկնային հեղեղ է, որի մեջ ամբողջ ուժով արտահայտվել է միայն Նովի. Շիրազին բնորոշ պարկերավոր մարմնությունը: Պոեմի ոչ անակնկալ հայտնությունը պայմանավորված է նախապարմությամբ, որի ուղղորդող բաղադրիչը խնամքով թաքնված է հեղինակի սրեղծագործական խառնվածքի, մարմնության ընդգծված յուրահարկությունների և նախորդ պոեմների ու բանաստեղծությունների մեջ: Ու նախնառաջ մարդու և մարդկային արժեքման խնդիրն է, որն այս պոեմը կապում է մայր «Բիրլիականին», «Աստծո գլուխգործոցին» և այս շարքում հեղինակի կամքով գեղեղված մյուս պոեմներին:

«Տիգրան Մեծի վիշաք և հավերժությունը» պոեմով Նովի. Շիրազը փաստում է, որ ինքը ոչ միայն իր ժամանակի հանճարեղ բանաստեղծն էր, այլև հայոց պարմության լավագույն գիտակներից էր: Պարմություն, որ նրա համար անցյալի դեպքերի և իրադարձությունների շարակարգություն չէին միայն, այլ ներկայի ու գալիքի համար լինելության բանալին էր, երկրի ու ժողովրդի ուսանելի կենսագրությունը՝ կազմավորումից մինչև նորագույն ժամանակները: Ինքնին հասկանալի է, որ մրախղացված գաղափարը նախքան բանաստեղծական երևակայության տրվելը նախ պիտի ամբողջանար ժա-



Թեմական ներկայացուցչական չորրորդ ժողովի մասնակիցները Մայր Աթոռում

մանակաշրջանի պարմական մանրամասներով, այնպես որ Տիգրան Մեծի կենսագրության խորիմացությունը Նովի. Շիրազի համար դեռ բավարար չէր նրա մասին պոեմ գրելու համար: Նա բաջարեղյակ էր անգամ օտար հեղինակների վկայություններին ու բնութագրումներին: Այս պնդման լավագույն ապացույցն այն է, որ Նովի. Շիրազն իր այս պոեմի համար որպես բնաբան է վերցրել ֆրանսիացի արևելագետ Ռեմե-Գրոսեի բնութագրական խոսքը. «Տիգրան թագավորը՝ այս դեռևս չճանաչված հզոր փրակալը, շարս ավելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդադը, որով հիացած է պարմությունը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Միհրդադը փայլուն կերպով «ինքնասպանության մղեց իր պետությունը», մինչդեռ Տիգրանն իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավերժության համար»:

Պոեմի հիմքում հայի լինելության հավերժական խնդիրն է. Տիգրան Մեծը թշնամու դեմ վճռական կռվի ելնելուց առաջ հաղթանակ է քանդում նախ իր երկրի կենտրոնախույզ ուժերի նկատմամբ: Կորցրած հայրենիքի վիշտը նրան մղում է ծանր մարտումների, բայց եւ վճռական գործողությունների: Իրարես ու հեռավոր էր նա, համոզված, որ ինքը հերապանում էր իրագործելի նպատակ: Ինքն իր արքայական սակավաթիվ բանակով չէր կարող այդ նպատակն իրագործել, իսկ եթե նրան միավորվեին հայ իշխանների գորաբանակները, հաղթանակը կդառնար հավասարի.

-Թե միաբանվեն սոքա... իմ ազգով՝

Ես կարող էի լուսինն էլ գերել,

Բայց ամեն իշխան՝ ինքնիշխան բազկով՝

Իրար դեմ գաղտնի ժանիք են սրել,

Իրար դեմ լարվում՝

Չեն միաբանվում,

Մեջքերդ հայ բախարի աչքերն են հանում...:

Նայ իշխանների՝ համազգային ու համապետական նպատակների շուրջ անմիաբան լինելու հանգամանքն օտար հեղինակներն էլ են նկատել ու գրել: Ես այս պահին հիշեցի հայ ժողովրդի բարեկամ, շվեյցարացի հիվանդապահ-բժիշկ Յակոբ-Բյունցլերի խոսքը, որը դեռ Յեղասպանության արյունոտ փորձերին ցավով գրում էր. «Նայերի վաղեմի չարիքը՝ անմիաբանությունը, նրանց համար դարձավ օրհասական, իսկ թուրքերին՝ մեծ օգնական: Բավական է կարդալ այս արտակարգ խելացի ժողովրդի պարմությունը: Կուռ համախմբվածությունը միշտ բացակա է: Շվեյցարացիների կարգախոսը՝ «Մեկը բոլորի համար, բոլորը մեկի», չգիտեն նրանք»: Խոստովանենք, որ իրոք չգիտեն:

Գրականագետը մեզ հուշում է, որ «Անի», ինչպես նաև՝ «Նայոց դանթեականը» եւ «Թոնդրակեցիներ» ծավալուն պոեմների պապագրությունը բանաստեղծը չդիտարկեց. «Նայոց դանթեականը» լույս տեսավ նրա մահվանից վեց տարի հետո, «Անին» հիմա քաղաքության ընթացքում է, իսկ «Թոնդրակեցիներ» պապագրության հարցը դեռ լուծված չէ:

«Անին» հեղինակի բնորոշմամբ պարմավիլիստիայական պոեմ է, եւ այն պարմական նյութը, որն արդեն գեղարվեստական արժեք է դարձել, սեղմ շարադրումով հետևյալն է. Գագիկ Ա. թագավորի մահից հետո թուրացավ Բագրատունիների պետությունը:

նը, սասարկացան ներքին երկպառակությունները հապկապես նրա որդիներին՝ Նովհաննես-Սմբարի և Աշոտ Չորրորդի միջև: Նովհաննես-Սմբար արքան այնքան թուլական գտնվեց, որ գաղտնի կրակով Անին հանձնեց բյուզանդացիներին: Մակայն դրան ընդդիմացավ մայրաքաղաքի պաշտպանության ազնվականությունն ու հայրենասեր բնակչությունը և սպարապետ Վահրամ Պախլավունու գլխավորությամբ ուժեղ դիմադրություն ցույց տվեց հայոց մայրաքաղաքը պաշարած բյուզանդական ու պարսկական զորքերին:

Ահա այս դրամատիկ անցքերն է պոեմում պարկերել Նովհ. Շիրազը՝ պարսկական միջավայրի խորապարկերում սրելով իր հիշյալ անձնավորությունների բարդ կերպարները և, որպես մարդկային կենդանի բնավորությունների, նրանց ներկայացրել հարուստ ու խաղացկուն գործողությունների համապարկերում:

Իսկ «Նայոց դանթեականը» պոեմի սրելով ծանր նախապարմությանն ու դրդապարձառնեին անդրադառնալիս գրականագետը նշում է, որ ԺԳ. դարի իրավացի բանաստեղծ Դանյուր Ալիգիերիի «Աստվածային կապակերպության» առաջին՝ «Դժոխք» մասի հեղի համեմատություն կատարելու ավանդույթը մեր նոր քննարկության մեջ սկզբնավորել է Սիամանթոն, վկայակոչելով նրա՝ Կիլիկիայի ավելի քան երեսունհինգ հազար հայերի ջարդերի առիթով գրված «Կարմիր լուրեր բարեկամն» և մասնավորապես նրա «Թթենին» բանաստեղծությունը, որի մեջ «արյան մղձավանջի և ըմբոսության երգիչ» Սիամանթոն վկայակոչել է Դանյուրին ու Եղեռնի իրականությունն անվանել «մահերու և մոխիրների դանդաղական ճանապարհ»:

Դանյուրին է դիմել նաև Ե. Չարենցը՝ «Դանթեական առասպել» և «Մահվան քնսիլ» պոեմներում: Գրականագետը մեզ հուշում է, որ Նայոց մեծ եղեռնի Դանյուրի «Դժոխքի» հեղի գուգահեռելու խնդրում Սիամանթոն ուսուցիչ էր թե՛ Չարենցի, թե՛ Ն. Շիրազի համար: Թեպետ ժամանակը ցույց տվեց, որ 1915-16 թթ. ռազմաճակատային անմիջական փախույթություններով գրած «Դանթեական առասպելը» գրելու շրջանում Չարենցը Եղեռնի մասին չի ունեցել այնպիսի խոր ու համապարփակ իմացություն, այնքան ամբողջական ու ընդգրկուն պարկերացում, ինչպես հետագայում՝ «Ռոջակիզվող կրակ» շարքը, «Երկիր Նաիրի» վեպը, «Խմբապետ Շավարշը», «Մահվան քնսիլ» պոեմները գրելիս: Եւ իրոք, ինչ պիտի րեսած լինե՞ր զինվոր Չարենցը Արեւմտյան Նայաստանում 1915-16 թթ. մի քանի ամիսներին՝ առանց ծրագրված երթուղուց դուրս գալու: Այդ մասին ինքը պիտի հեղու վկայեր. «Նա րեսնում է լոկ այն, ինչ րեսնում է»: Ե. Չարենցի նման Ե. Օսյանն էլ պիտի խոստովանե՞ր՝ «ի՞ր սկզբնավորության մեջ չէի պարկերացներ աղերի ահեղի մեծությունը»:

Նայ հեղինակներից թեպետ շարերն են գրել Եղեռնի դժոխային րեսարանների մասին, բայց նրանց վաստակը ըստ արժանվույն գնահատելով, Ս. Մուրադյանը նշում է, որ Եղեռնի և հեղեղեռնյան շրջանում հայ գրականության մեջ փաստորեն ձևավորվել է «դանթեականի» երկու հիմնական ըմբռնում՝ չարենցյան և շիրազյան, որոնք, էական շար ընդհանրություններով հանդերձ, ունեն այդ երկու հեղինակների խառնվածքով, գեղարվեստական մրաժողության յուրահատկություններով և գաղափարական ու գեղագիտական նպատակադրումներով պայմանավորված փարբերություններ: Գրա-

կանագերի գնահատմամբ «Դանթեականի» չարենցյան ու շիրագյան ըմբռնումների առաջին էական փարբերությունն այն է, որ Նովի. Շիրագը հենց սկզբից Դանթեին հրավիրում է հայոց եղեռնադժոխք՝ նրան «անիրականից դեպի իրականը» փոխելով ու ցույց տալով «կոտորածների եղեռնադաշտերն հազարամայր», ուր «մեղքն» անպարիժ, ու վիշտն է դեռ ծով»:

Ս. Մուրադյանը մի քանակ ընդգծված բծախնդրությամբ է վերլուծում Նովի. Շիրագի «Նայոց դանթեականը»: Մանրամասնորեն՝ ջիլ առ ջիլ, երակ առ երակ, հյուսվածք առ հյուսվածք վերծանելով, ընթերցողին ասես մասնակիցն ու վկան է դարձնում գեղարվեստական մոտիվի ու պատկերի արարման ընթացքին: Ողբերգական ընթացքին՝ այդ ողբերգության մասին սրելով զգրականությունը որակելով որպես հայոց եղեռնապատմի գրականություն:

Բայց ի՞նչ կարարվեց աշխարհում, այդ ի՞նչ կարարվեց եւ ինչպե՞ս եղավ, որ աշխարհի առաջադեմ մարդկությունը, ի վերջո, նյութերեղբայան հանրահայտ վճռով դադարապարտեց Երկրորդ համաշխարհային պատերազմի հանցագործներին, բայց այդ նույն առաջադեմ մարդկությունը ինչ բուրժանոքությունությամբ է հեկեկում այն ամենին, ինչը որ աղերսվում է Նայոց Յեղասպանության հետ եւ ինչ սիրալիք ներողմությունությամբ է փայփայում թուրք ոճրագործներին, որոնց պարագայում առայսօր չի կայացել նյութերեղբայան դադարապարտություն: Նայոց մեծ եղեռնը միջազգայնորեն դեռուս լիարժեք չի ճանաչվել, հանցագործ Թուրքիան չի կանգնել մարդկության ու պատմության դադարապարտ առջև, ու հենց այդ պարճառով էլ, օգտվելով իրենց համար նպաստավոր վիճակից, ոճրագործների սերունդներն առայժմ սառնասիրտ ցինիզմով ուրանում են նախնիների գործած հին ու իրենց նոր հանցանքները...

Ո՛չ համաշխարհային դադարապարտում կա, ո՛չ էլ թուրքերի կողմից գոյում ու հալածում: Արդյունքում՝ նոր բորենու արնամուրը նախապիպ, թուրքի ամբողջական ու խորացված բնագոյ, սեւ հոգիների ռեմակային խրախճանք, մարդակերի փառաբանում ու հերոսացում՝ միայն նրա համար, որ հայ է սպանել: Քնած հայ: Անպաշտպան հայ: Մորթի եւ երեսակայության ընդամենը մեկ այլափոխությամբ՝ յաթաղանին փոխարինել է կացինը: Իրոք որ՝ «այստեղով թուրքն է անցել»: Եւ դեռ անցնելու է, քանի դեռ չկա պարիժը: Պարիժը չկա, ու մենք դեռ զարմանում ենք: Զարմանալի է, որ դեռ զարմանում ենք: Մեծ լոռեցին մեզ խրապել ու ասել էր.

Բերանն արևոտ Մարդակերը էն անբան
Նագար դարում հագիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արևոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Ահա այս եւ նման իրողությունների գեղարվեստական պատկերն է Նովի. Շիրագի «Նայոց դանթեականը» պոեմը, որը հեղինակն ինքն անվանել է ողբամարյան կամ դադարապարտամարյան: Այս ողբամարյանը մեզ հուշում է՝ քանի դեռ թուրքն իր այս քաղաքականապես բնագոյի մեջ է՝ Եղեռնի վրանցը միշտ էլ կլինի, ուրեմն իսկապես արդիական է Նովի. Շիրագի «Նայոց դանթեականը»: Ուրեմն իսկապես արդիական են այս տոհմերը.

Ով լի՛րբ լռություն... Ու լռում են, րե՛ս,
 Նյութին իր հավերժ սառույցների պես,
 Նարավն՝ իր լուսնի մահիկի նման,
 Արևելքն՝ ինչպես ծուխն իր դեյլանի,
 Արևմուտքն՝ ինչպես պոռնիկն անսահման...
 Այնինչ, ո՛վ աշխարհ, թե քո լրբենի
 Այս չորս բերանով գոռայիր մի հեղ՝
 Դապյան կբաշվեր թուրը սուրթանի,
 Չէ՛ր հորդի դժոխքն այսքան խելահեղ,
 Մի բուռ չէր մնա ծովից՝ ազգը մեր...

Այժմ իմ խոհի մասին. խոստովանեմ, որ գիրքն ընթերցելիս անընդհատ մրաժույց էի՝ գուցե արժեր հուշագրային պատմությունը փարանջապրել գրականագիտական վերլուծություններից ու առանձին գրքով հրապարակել: Բայց գիրքն ամբողջովին ընթերցելուց հետո րպավորությունս փոխվեց, հասկացա, որ շարադրանքի այս ոճը ճիշդ ընտրված քարբերակ է, որ Ս. Մուրադյանն այսպես պիտի գրեր, հարկապես եւ բացառապես Ս. Մուրադյանը հենց այսպես պիտի գրեր: Բառորդ դար բանասերեղծի հեղ գրական միջավայրի նույն օդը շնչած, բանասերեղծական բարդ խառնվածքն ու վարքի քարտերը ընթացքը սեփական փողի հյուսվածքներում մանրամասնորեն քարքալոված փեսած, նույն առվով հոսող ջրերում գրագանագիտական իր մարտումները շիրագյան անկանխաբեսելի ներշնչանքի հեղ խառնած, բանասերեղծի քառապանքի հոսն իր ժունգլերում ամեն պահ զգացած, նրա կարճատև հրճվանքներով թեւավորված, հեղը կերած ու խմած, նրա հեղ որդիական սիրով կապված ու անմնացորդ նվիրված, նրա կենսագրությանը ձուլված, միասուրբյուն դարձած գրականագետը պիտի որ այսպես գրեր: Այսպես ու միայն այսպես: Եթե պարպավորությունն իրենն էր, ուրեմն իրավունքն էլ պիտի իրենը լիներ: Իսկ իրավունքն ինքնին մրահղացում եւ ընտրություն կարարելու ոճ է: Ու նաեւ՝ վասպակ:

Ընդունված կարգով կարելի էր նաեւ բացթողումների մասին խոսել, բայց սա այն դեպքն է, որ մարգագետնի ծաղկունքին նայող աչքը մանր-մունր փշերին ուշադրություն չի դարձնում: Շնորհավորենք Ս. Մուրադյանին ու շնորհակալ լինենք՝ մեզ Շիրագ երեսույթի հեղ մեկ անգամ եւս առնչվելու հնարավորությունն ընձեռելու համար, եւ մեր ասելիքը ավարտենք ժողովրդական խոսքով՝ քաշքիդ խմորը հացթուխն քուր, երկու լավաշ էլ ավելի քուր:

ՎԱՀԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ